ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ

Հոդված 6. Արբիտրաժին աջակցող և վերահսկող դատարանը

1. Սույն օրենքի 9-րդ հոդվածով, 11-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 13-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածով, 27-րդ հոդվածով նախատեսված գործառույթներն իրականացնում է արբիտրաժի գտնվելու վայրի դատարանը:

2. Սույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով, 35-36.2-րդ հոդվածներով նախատեսված գործառույթներն իրականացնում է ~~Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների~~Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը:

(6-րդ հոդվածը խմբ. 19.06.15 ՀՕ-76-Ն)